ՀՏԴ 101.1:316

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Թ. Ա. Հովհաննեսյան

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դիտարկվող նյութում փիլիսոփայական վերլուծությունը իրականացվում է հետևյալ տեսանկյունով՝ կապիտալիզմի զարգացման ինդուստրիալ և հետինդուստրիալ (տեղեկատվական) հասարակությունների բնորոշիչների համեմատությամբ:

Քննարկվել են տեղեկատվական կապիտալիզմի համաշխարհայնացման միտումները և այդ համատեքստում ազգային պետությունների սոցիոմշակութային փոխակերպումների առանձնահատկությունները: Հատուկ անդրադարձ է եղել հետարդյունաբերական հասարակության և մարդու միաչափության ձևավորման հարցում տեղեկատվական արդի միջոցների հարուցած հետևանքներին:

Առանցքային բառեր. *ինդուստրիալ հասարակություն, հետինդուստրիալ հասարակություն, արտադրող անհատ, սպառող անհատ, խճանկարային մշակույթ, միաչափ մարդ*

Ի տարբերություն կապիտալիզմի զարգացման արդյունաբերական փուլի, որին, ինչպես նկատում է Է.Թոֆֆլերը, բնորոշ էին ստանդարտացումը, կառուցվածքայնությունը, մասնագիտացումը և այլն, հետարդյունաբերական-տեղեկատվական հասարակությանը բնորոշ է արտադրության, աշխատուժի, պահանջարկի ու առաջարկի, աշխատավարձի և ընդհանրապես կյանքի բոլոր ոլորտների ճկունությունը [1]: Այս ամենի հետևանքով հասարակական կյանքն ու ապրելակերպը դառնում են տարաբնույթ և այլընտրանքային, ծագում են բազմապիսի ու բազմաբնույթ նախապատվություններ, ընտրության այլընտրանքային հնարավորություններ, ինչը նշանակում է նաև, որ միևնույն հասարակության ներսում երբեմնի միասնական մշակույթը կոտորակվում է խմբային, անհատական ու զանազան այլ «աղանդավորական» մշակույթների: Այս իրողությունը երկակի ձևով է ազդում անձի և նրա նույնականության ձևավորման վրա: Մշակույթի կոտորակումը, մի կողմից, նպաստում է անձի նույնականության բեկորացմանը և կայունության ու բավարարվածության կորստին, մյուս կողմից, այդ երևույթը կարելի է դիտարկել որպես ժողովրդավարացման գործընթաց, որը նպաստում է անձի ապակենտրոնացմանը և ազատ ընտրություն կատարելու հնարավորությունների ընդլայնմանը: Երկու դեպքերի համար էլ ընդհանուրն այն է, որ նոր պայմաններում մարդ ձեռք է բերում տարբեր ապրելակերպ, իրավունք և հնարավորություն: Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ սոցիոմշակութային բազմազանության մեջ ապրող անհատների համար դասակարգային պատկանելությունն ու սոցիալական դերն այլևս վճռորոշ նշանակություն չունեն վարքի նույնացման համակարգում և, հետևաբար, չեն կարող դառնալ քաղաքական մոբիլիզացիայի գլխավոր դրդապատճառը:

Այն հանգամանքը, որ ժամանակակից արևմտյան քաղաքակրթությունն արտադրությունից աստիճանաբար փոխակերպվում է սպառող համակարգի, նշանակում է «արտադրող անհատը» վերաճում է «սպառող անհատի», որին բնորոշ են անհատականությունը, կյանքի անձնականացումը, տեղեկացվածությունը և այլն: Այս երևույթը, իր հերթին, նշանակում է, որ ժամանակակից տեղեկատվական հասարակություններում զարգացումը մեծապես պայմանավորված է նրանով, թե մարդիկ որքան արագ ու բազմակողմանիորեն են մշակում ունեցած տեղեկատվությունը: Բայց համաշխարհային տեղեկատվական ցանցի ստեղծումը փոխում է ոչ միայն մարդու կենցաղն ու սոցիալական կյանքը, այլև ազգային պետությունները՝ ստեղծելով նոր տնտեսություն և նոր շուկա, որոնց բնորոշ գծերից մեկը «ստեղծագործական քաոսն» է:

Քննարկելով տեղեկատվական կապիտալիզմի համաշխարհայնացման միտումները և այդ համատեքստում ազգային պետությունների սոցիոմշակութային փոխակերպումների առանձնահատկությունները՝ հստակ է դառնում տեղեկատվական համաշխարհային ցանցի ստեղծման հետևանքներն ազգային պետությունների և դրանք օրինականացնող քաղաքացիական հասարակության ինստիտուտների վրա: Այսպես՝ նույն պետության ներսում առանձին մարզերի կիսաինքնավար վիճակը, տեղեկատվական կապերը, վերազգային կորպորացիաների գոյությունը և այլն պետություններին հնարավորություն չեն տալիս անգամ վերահսկողություն հաստատել սեփական քաղաքացիների վրա: Այն պահից սկսած, ինչ կապիտալիզմը դարձել է համաշխարհային, առանձին պետությունների մանևրելու հնարավորությունները խիստ սահմանափակվել են՝ հատկապես ազգային տնտեսության և ազգային քաղաքականության մեջ:

Ինչպես արդեն նշեցինք, տեղեկատվական կապիտալիզմն էապես փոխում է նաև կենցաղն ու սոցիալական կյանքը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամանակակից հասարակությունն իրենից ներկայացնում է տեղեկատվական բարդ համակարգ և նաև ինչ-որ իմաստով «պրոֆեսիոնալ հասարակություն», կարելի է ասել, որ այդ հասարակությունում առաջին պլան է մղվում այն կապիտալը, որը ձևավորվել է կրթության միջոցով:

Արդի տեղեկատվական հասարակություններն ունեն սոցիոմշակութային մեկ կարևոր առանձնահատկություն, որով տարբերվում են արդյունաբերական հասարակություններից: Արևմտյան տեսաբանները (Դ.Բելլ, Մ.Կաստելս, Հ. Շիլլեր և այլոք) իրավացիորեն նկատում են, որ արդյունաբերական և հետարդյունաբերական հասարակություններն իրարից տերբերվում են նրանով, որ առաջին դեպքում շահույթ ստանալու հիմանական մեխանիզմներն արտադրական-տեխնիկական են, իսկ երկրորդ դեպքում առաջին պլան են մղվում սոցիոտեխնիկական հարացույցները (պարադիգմ): Նրանք գտնում են, որ անհրաժեշտ է իրարից տարբերել «արտադրական կապիտալիստական եղանակ» և «զարգացման տեղեկատվական եղանակ» արտահայտությունները: Արտադրության կապիտալիստական եղանակը կապված է «շուկայական տնտեսության», «մասնավոր սեփականության» և «արտադրություն հանուն

շահույթի» հասկացությունների հետ: Մինչդեռ զարգացման տեղեկատվական եղանակի դեպքում արտադրողականության բարձրացման հիմնական գործոնը գիտելիքների փոխգործունեությունն է: Այս իմաստով Մ. Կաստելսը իրավացիորեն նկատում է, որ բոլոր դարաշրջաններում գործել են տեղեկատվության հաղորդման հատուկ մեխանիզմներ, և այդ իմաստով բոլոր ժամանակներում էլ հասարակություններն եղել են տեղեկատվական: Բայց ի տարբերություն նախորդ դարաշրջանների, ժամանակակից քաղաքակրթության պայմաններում նոր տեխնոլոգիաների շնորհիվ տեղեկատվության մշակումն ու փոխանցումը վերաճում է անմիջական արտադրողական ուժի: Ահա թե ինչու Կաստելսն առաջարկում է «տեղեկատվական հասարակություն» և «տեղեկատվացված հասարակություն» արտահայտությունները նույնացնել՝ վերջինս համարելով հատկապես արդի հասարակություններին բնորոշ որակ [2]:

Արտադրության կապիտալիստական եղանակն ապահովում է հարստության ստեղծումը, իսկ զարգացման տեղեկատվական եղանակը կազմակերպում է այդ հարստությունը:

Այլ կերպ ասած՝ արտադրության տեխնիկան ու տեխնոլոգիան ավելի կարևոր են, քան սոցիալական համակարգի բնույթը: Տեղեկատվական հասարակության տեսաբանների կարծքով զարգացման ու առաջընթացի հիմքում ընկած է տեխնիկան և տեխնոլոգիան:

Կ. Յասպերսը գտնում է, որ տեխնածին քաղաքակրթության մեջ մարդու ներքին էության դրսևորումն այլևս ոչ թե դատողությունն է, այլ՝ գիտելիքը, ոչ թե կյանքի իմաստի մասին խորհրդածությունն է, այլ գործելու կարողությունը: Գոյություն ունենալ նշանակում է գոյություն ունենալ գործի մեջ: Եվ քանի որ գործն ու գործարարությունն պահանջում են բոլորին հասկանալի պարզություն, այդ պատճառով աստիճանաբար մարդկանց վարքը դառնում է միակերպ, իսկ բնավորությունը միանման: Աստիճանաբար ընդհանուր է դառնում նաև շփման բարոյականությունը՝ ոչինչ չարտահայտող բարեհամբույր ժպիտ, անտարբերություն, անդեմություն և այլն [3]: Կարգավորման տեխնոլոգիաների ունիվերսալ բնույթն արտահայտվում է նաև նրանով, որ մշակույթը, քաղաքականությունը և տնտեսությունը դառնում են մեկ միասնական համակարգ և տեխնոլոգիական ռացիոնալիզմը վերաճում է նաև քաղաքական ռացիոնալիզմի: Մարկուզեն գտնում էր, որ ժամանակակից զարգացած հետինդուստրիալ քաղաքակրթության հիմքում ընկած է մի յուրահատուկ պատմական նախագիծ (տեխնոլոգիական նախագիծ կամ տեխնոլոգիական ռացիոնալիզմ), որը մարդուն զրկում է այլընտրանքային հնարավորություններից, նրան դարձնում պահանջմունքների բավարարման տրամաբանությանը գերի՝ ինչը քաղաքակրթության հետագա զարգացման համար կարող է ունենալ աղետաբեր հետևանքներ: Քննարկելով հետինդուստրիալ քաղաքակրթության զարգացման առանձնահատկությունները, Մարկուզեն նկատում է, որ մարդու իրավունքների ու ազատությունների, ազատ ձեռներեցության ու շուկայական հարաբերությունների, պահանջմունքների բնույթի ու բավարարման հնարավորությունների բնագավառներում տեղի են ունենում այնպիսի արմատական վերաիմաստավորումներ, որոնք,

իրենց հերթին, ձևավորում են միաչափ մտածողություն ու վարք, մարդկանց վրա վերահսկողություն հաստատելու նոր մեխանիզմներ, ինչի հետևանքով հասարակությունը ևս դառնում է միաչափ [4]:

Ֆրանսիացի նշանավոր տեսաբան Մոլը, վերլուծելով տեղեկատվական հասարակության ազդեցությունը մշակույթի վրա, նկատում է, որ դրա հետևանքով ավանդաբար հումանիստական-ամբողջական ուղղվածություն ունեցող մշակույթը վերածվում է «խճանկարային մշակույթի», որի բնորոշ գծերից են պատահականությունը, հատվածականությունը, մակերեսայնությունը և այլն [5]: Այդ մշակույթը, որը սոցիալական կյանքի ընթացքում մարդու կողմից ստեղծված արհեստական միջավայրի բնական տեսանկյունն է, տեղեկատվական հասարակություններում ձևավորվում է ոչ թե ճանաչողության ռացիոնալ գործունեության միջոցով, այլ տեղեկատվության մասսայական միջոցների ազդեցության տակ: Հետարդյունաբերական հասարակության և մարդու միաչափության ձևավորման հարցում տեղեկատվության արդի միջոցների հարուցած հետևանքները միանշանակ չեն: Մի կողմից տեղեկատվությունը տարածում է էկլեկտիկ և սոցիոդինամիկ մշակույթը, ինչը լիովին համապատասխանում է ազատության ու ժողովրդավարության «այլընտրանքային» սկզբունքին, մյուս կողմից, ղեկավարվելով տնտեսական ու քաղաքական շահի սկզբունքներով, տեղեկատվությունը նպաստում է ամբոխավարական (դեմագոգիկ) ու անառարկելի (դոգմատիկ) սոցիոմշակութային դիրքորոշումների, արժեքների ու վարքի պատճենների տարածմանը, դրանով իսկ նպաստելով մարդու և հասարակության միաչափության ձևավորմանը: Վերջին երկու դեպքերում տեղեկատվությունը կատարում է «զգացմունքների ճարտարապետի» գործառույթ, քանի որ ղեկավարվելով քաղաքական ու տնտեսական գովազդի տրամաբանությամբ՝ հասարակությունը դիտում է որպես սպառող և նրան մատուցում ուղղորդված և նախապես զտված արժեքներ ու պահանջմունքներ:

Т. А. Оганнесян

СОЦИО-КУЛЬТУРНЫЕ ОСОБЕННОСТИ ИНФОРМАЦИОННО-ТЕХНОЛОГИЧЕСКОГО ОБЩЕСТВА

Производится философский анализ со следующей точки зрения: в сравнении префиксов индустриальных и постиндустриальных (информационных) обществ развития капитализма. Обсуждались тенденции глобализации информационного капитализма, и в этом контексте - особенности социо-культурных трансформаций национальных государств. Отдельно выделены последствия, вызванные современными информационными средствами в вопросе формирования одномерного человека и постиндустриального общества.

Ключевые слова: *индустриальное общество, постиндустриальное общество, личность производителя, личность потребителя, мозаичная культура, одномерный человек*

T. A. Hovhannesyan

SOCIO-CULTURAL FEATURES OF INFORMATION-TECHNOLOGICAL PUBLIC

The philosophical analysis of theme is conducted by the following point of view: in comparison of prefixes of industrial and postindustrial informational publics of capitalism's development.The tendencies of informational capitalism's globalization and features of national countries socio-cultural transformations in that context were discussed. Special reflect was done to the sequences caused by modern informational means in problem of postindustrial public and formation of man's mono-metrics.

Keywords: *industrial public, postindustrial public, manufacturer person, consumer person, mosaic culture, mono-metric man*

Գրականություն

1. **Тоффлер Э.** Третья волна. - М., 1999. - С. 33-34.
2. **Кастельс М.** Информационная эпоха: экономика, общество и культура. - М., 2000. - С. 39.
3. **Ясперс К.** Духовная ситуация времени. - М., 2001. - С. 16.
4. **Маркузе Г.** Одномерный человек// Эрос и цивилизация. - М., 2003. - С. 275.
5. **Моль А.** Социодинамика культуры. - М., 1997. - С. 352.

Հովհաննեսյան Թագուհի Արտաշեսի *(ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոն, ասիստենտ, (+374) 93351746:*
Оганнесян Тагуи Арташесовна *(РА,Ереван) - НУАСА, кафедра Экономики, права и управления, ассистент, (+374) 93351746.*
Hovhannesyan Taguhi Artashes *(RA, Yerevan)- NUACA, chair of Economy, law and management, assistant, (+374) 93351746.*

Ներկայացվել է՝ 26.12.2014թ.
Ընդունվել է տպագրության՝ 15.01.2015թ.